


ԼՐԱՏՈՒ

ԹիՒ 5 - Փետրուար 2024



70 տարի է առելի՝ Սերունդներու Զայեցի Դաստիարակութիւն



Տնօրէնութեան Խօսքը



Վահան Թէքէեան վարժարանէն ներս մեր աշակերտներուն յաջողութիւնը երաշխաւորուած է աշակերտակեդրոն, հաւասարակշռուած ու հարուստ ուսումնական կրթական ծրագիրներով:

Մեր ուսուցիչները որակեալ, հոգատար եւ փորձառու մանկավարժներ են, որոնք պատրաստ են հոգալու իրաքանչիւր աշակերտին ուսումնական եւ ընկերային կարիքները, աջակցելով անոր աճման եւ ուսման մակարդակի բարելաւման:

Կը հաւատամ կրթական հարուստ համակարգի մը, որ կը խթանէ ու կը զարգացնէ մանուկին երեակայութիւնը: Երեակայութեամբ նոր գաղափարներ կը ծնին. անհատներ առաջ մղելով ստեղծելու եւ արտադրելու նորարարութիւններ: Վահան Թէքէեան Միջն. վարժարանը կարեւորութիւն կու տայ այն մեթոտներուն, որոնք կը զարգացնեն աշակերտին ստեղծարար երեակայութիւնը:

Հաստատօրէն կը հաւատանք, որ ծնողներն են իրենց զաւակին առաջին եւ ամենակարեւոր ուսուցիչը: Ծնողները շատ կարեւոր դեր կը խաղան իրենց զաւակներուն կրթութեան մէջ:

Ուստի ուրախութեամբ կ'ողջունենք մեր բոլոր ծնողներուն, որոնք աշխոյժ դերակատարութիւն կ'ունենան իրենց զաւակներուն կրթադաստիարակութեան մէջ: Մշտապէս կը ձգտինք կառուցել ծնողք-ուսուցիչ ուժեղ յարաբերութիւններ, որոնք շատ կարեւոր են մեր ուսանողներուն կրթական յաջողութիւններուն համար:

Մենք ունինք իսկապէս հրաշալի դպրոց, ուր կայ աջակցող դեկավարութիւն, բարի, օգնական եւ ժրաջան ծնողական յանձնախումբ, նուիրուած ուսուցչակազմ եւ անձնակազմ եւ հոգեհարազատ աշակերտութիւն, որոնց հետ աշխատիլը հաճոյք է ու հետաքրքրական:

Մենք միշտ կը ձգտինք կատարելագործել մեր վարժարանին կրթադաստիարչական աշխատանքը հասցնելով զայն ամէլի բարձր մակարդակներու:

Լաւագոյն մաղթանքներով՝
Սեւանա Սեմերձեան Տարագձեան



Վահան Թէքէեան Վարժարանի Մանկապարտէզը Նոր Շունչ Ստացաւ Տիար Սէմ եւ Սիլվա Սիմոնեաններու Շնորհիւ



ՍԷՄ ԵՒ ՍԻԼՎԱ ՍԻՄՈՆԵԱՆ
Մանկապարտէզ
SAM & SYLVA SIMONIAN
Kindergarten

Կիրակի 1 Յոկտեմբեր 2023-ին, տեղի ունեցած միջոցառումը հպարտութիւն կը ներշնչէ բոլոր Հիբանանահայութեան, յատկապէս Պէյրութի Վահան Թէքէեան վարժարանի մեծ ընտանիքին, քանզի վարժարանս օժտուեցաւ վերանորոգ մանկապարտէզով, որուն համար իշխանական նուիրատուութիւն կատարած է անոր հաւատարիմ սանը հանդիսացող ծարտարագէտ, տեղեկատուական արհեստագիտութեան ոլորտի ձեռներէց, հայրենիքի եւ սփիւռքի մէջ կրթական բարեգործական զանազան ծրագիրներ իրականացնող՝ Տիար Սէմ Սիմոնեանը, որուն համար Վահան Թէքէեան վարժարանը առանձնայատուկ տեղ կը գրաւէ իր մանկութեան մէջ:

Այդ օր, Վահան Թէքէեան վարժարանի մէջ հաւաքուած էր հոծ բազմութիւն կատարելու համար անոր վերանորոգուած մանկապարտէզի բացումը, որ այսուհետ պիտի կրէ, Սէմ եւ





Սիլվա Սիմոնեան Մանկապարտէզէ պատուանունը: Ձեռնարկին իր ներկայութեամբ պատուեց ու իր օրհնաբեր բարեմաղթանքները փոխանցեց Լիբանանահայ թեմի բարեջան առաջնորդ՝ Գերաշնորհ Տէր Շահէ Արքեպիսկոպոս Փանոսեան: Ներկայ էին նաեւ մանկապարտէզիս բարերարներ Տէր եւ Տիկ. Սէմ եւ Սիլվա Սիմոնեաններ եւ իրենց համեստափայլ դուստրը՝ Սեւան, ինչպէս նաեւ Պուրճ Զամուտի քաղաքապետ՝ Պրն. Մարտիկ Պօղոսեան, Թէքէեան Զիմնադիրներու Մարմնի անդամներ գլխաւորութեամբ ատենապետ՝ Տիար Յակոբ Գասարճեանի, ՌԱԿ Լիբանանի Շրջանային վարչութեան ատենապետ՝ Տօքթ. Աւետիս Տաքէսեանի եւ անդամներու, ԹՄՄ Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ՝ Տօքթ. Յակոբ Փափազեանի եւ անդամներու, ԶԲԸՄ-ԶԵԸ-ի պատասխանատուներ, Լիբանանահայ Մամուլի ներկայացուցիչներ, վարժարանիս Տնօրէնութիւն, Ուսուցչական կազմը եւ ընտիր բազմութիւն մը:



Հոգաբարձութեան ատենապետուիին Տիկին Անի Լաչինեան Մակարեան իր ելոյթով դրուատեց վարժարանին առաքելութիւնն ու բարերար ամուլին ծաւալած գործունէութիւնը: Ան իր խօսքին ընդմէջէն հակիրճ ու բովանդակալի տեղեկութիւն փոխանցեց բարերար Սէմ Սիմոնեանի անցեալի մասին՝ մանկութեան, երիտասարդութեան եւ գործնական կեանքի ասպարեզին մէջ ձեռք բերած բազմաթիւ յաջողութեանց մասին: Ան իր ելոյթին մէջ նաեւ շեշտեց Սիմոնեան բարերար ամուլին առատաձեռն նուիրատուութեան:



Առաջնորդ սրբազանին օրհնության ու աղօթքն ետք կատարուեցաւ վերանորոգ մանկապարտէզի յուշատախտակի պաշտօնական բացումը: Որմէ ետք կատարուեցաւ յիշարժան առիթին համապատասխան երախտագիտութեան յուշանութներու յանձնում բարերար անուին, ձեռամբ՝ ԹՄՄ Յիմնադիրներու Մարմնի ատենապետ՝ Տիար Յակոբ Գասարճեանի եւ վարժարանիս ժրաջան Տնօրէնուհի՝ Տիկ. Սեւանա Սեմերճեան Տարագճեանի:





Ամփոփ տեղեկագիր Վահան Թէքէեան Միջն. Վարժարանի ծրագիրներուն եւ գործունէութիւններուն 2023-2024 ուսումնական տարւոյն ընթացքին

Վերամուտ Նախակրթարանի եւ Միջնակարգի



Մէծ եւ Սիւլվա Սիմոնեան Մանկապարտէզի Վերամուտ





Ուսումնական Գործունեություններ

Մարդ-մեքենաշինությունը (Robotics) Սէմ և Սիլվա Սիմոնեան Մանկապարտեզին մէջ

Սէմ եւ Սիլվա Սիմոնեանե մանկապարտեզի՝ Կոկոն եւ Ծաղիկ դասարանի մեր փոքրիկները, փոխգործօն գրատախտակին վրայ մեծ հաճոյքով պատրաստեցին ընծուղտ մը՝ օգտագործելով արհեստավարժական յատուկ գործիքներ, զանոնք կապելով իրենց համապատասխան՝ քայլ առ քայլ ծրագիրներուն հետ:



STEAM Արհեստավարժական Ուսումնական Ծրագիր

Շարունակեցինք ներառել Անգլիական SAM labs-ի "STEAM" ծրագրի գործածութիւնը համագործակցաբար Professional Learning Center-ի հետ:





Նկարագրի Կրթության Ծրագիր

Ազնուություն



Մաքրություն



Աշխատասիրություն



Բոլժոգնութեան Դասախօսութիւն եւ Վերապատրաստում:

Կարեւոր է տեղեակ ըլլալ, թէ ինչ հիմնական մեթոտներ պէտք է կիրառել արկածի մը ենթարկուելէն ետք: Տիրապետելով հանդերձ Բոլժոգնութեան հիմնական նախագիտելիքներուն, ուսանողներն եւ ուսուցիչները, միշտ զգօն վիճակի մէջ կը գտնուին: Բոլժոգնութիւնը կը յառաջացնէ անհատին մօտ անվտանգութեան զգացումը:

Մեր սրտանց շնորհակալութիւնը կը յայտնենք Լիբանանի Հայ Օգնութեան Խաչին, ուսանողներուն ու մեր աշխատակազմին տրամադրելու համար կարեւոր տեղեկութիւններ եւ ցուցմունքներ:



Բաց Դռներ Սէմ եւ Սիլվա Սիմոնեան Մանկապարտէզէն Ներս



Ուսուցիչի Վերադասարանություն

Դասարանի Կառավարում և Զգացական Բանականություն Թեմաներով Աշխատածողով

Վահան Թեքեյան Միջն. Վարժարանի ուսուցչակազմը՝ Սեպտեմբեր -2023 ,12ին, վարժարանի Պարսամեան սրահին մէջ մասնակցեցաւ, Դասարանի Կառավարում և Զգացական Բանականություն թեմաներով արդիւնաւէտ աշխատածողովին, որ կազմակերպուած էր SEL HUB մասնագիտական գրասենեակի տնօրէն և հմուտ մասնագէտ Տիկ. Մէյրի Ղազարեան Կիրիւնեանի կողմէ: Մեր խորին երախտագիտութիւնը կը յայտնենք Տիկ. Կիրիւնեանին:



Աֆլայութիւն Աշխատանոց

Հայ ուսուցիչներուն մօտ քայլ պահելու նորարար դասաւանդման ոճերու և մեթոտներուն կիրառման, ինչպէս նաեւ անոնց կարողութիւնները հզօրացնելու նպատակով՝ ՀԲԸՄ-ի Վարժարաններու սրահին մէջ տեղի ունեցաւ արդիւնաւէտ աշխատանոցներու շարք մը, համագործակցութեամբ՝ Աֆլայութիւն Միջազգային և YMCA Լիբանանի մասնաճիւղերուն,




հովանավորութեամբ՝ Գալուստ Կիլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունք-ին: Մեր վարժարանի Հայերէնի և Հայ Մշակոյթ դասանիւթերու ջանասէր ուսուցչուհիներ՝ Օրդ. Սեդա Պազգալեանը և Տիկ. Ռիթա Թամուկեանը, ինչպէս նաեւ անգլերէնի համակարգող՝ Օրդ. Թամար Ճեհիզեանը իրենց մասնակցութիւնը բերին սոյն շահաւէտ աշխատանոցին:

Մեքենաշինության Դասընթացը

Մեքենաշինութիւնը փոքրիկներուն համար կ'առաջարկէ ուսուցողական գործիքներ, որպէսզի անոնք կարենան ազատօրէն մտածել իրենց գաղափարները իրականութիւն դարձնելու համար:

Ուստի, վարժարանիս ժրաջան մանկապարտիզպանուի Տիկ. Վերա Սունկուլեան Յաննան հետեւեցաւ մեքենաշինութեան դասընթացքի մը օգնելու համար մեր փոքրիկները հասնելու իրենց երազանքներուն մեքենաշինութեան միջոցով:



Ուսուցիչներու Վերապատրաստումի Ծրագիր

Գալուստ Կիլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Համայնքներու Բաժանմունքի հովանաւորութեամբ եւ Lebanese American University(LAU)-ի հետ համագործակցաբար մշակուած Լիբանանահայ Վարժարաններու Ուսուցիչներու վերապատրաստումի երկամեայ ծրագիրին, իր մասնակցութիւնը բերաւ վարժարանիս հայերէնի ուսուցիչ՝ Պրն. Աւետիս Տիպանը: Սոյն ծրագրի աւարտին՝ Շաբաթ 23 Սեպտեմբեր 2023-ին, ան վկայուեցաւ համապատասխան վկայագրով: Կը շնորհաւորենք Պրն. Աւետիս Տիպանը, մաղթելով անոր նորանոր յաջողութիւններ:



Մշակութային Տօներ

Թարգմանչաց Տօն

Ներդարողական հայ լեզուի ու մշակույթի տօնակատարություններու ծիրեն ներս, 13 Հոկտեմբեր, 2023-ին Պարսամեան սրահին մէջ տեղի ունեցաւ Թարգմանչաց Տօնի աշիթով միջոցառում:



Զօրակցութիւն Արցախին





Վահան Թեբեանի Ծննդեան 145-Ամեակը

9 Նոյեմբեր 2023-ին արտասովոր եռուզեռ կը տիրէր մեր վարժարանի Յակոբ Պարսամեան սրահին մէջ: Այդ օր նշուեցաւ բանաստեղծ, արձակագիր, հրապարակագիր, խմբագիր, հասարակական գործիչ, թարգմանիչ եւ մանկավարժ Վահան Թեբեանի ծննդեան 145-ամեակը իրայատուկ ձեւով: Տեղի ունեցաւ արտասանութեան մրցոյթ Նախ. Դ - Միջն. Գ. աշակերտներու միջեւ: Աւարտին՝ յաղթող մասնակիցները արժանացան յատուկ գնահատագիրներու:





Լիբանանի Անկախության Տօն

Մեծ խանդավառությամբ տօնեցինք
Լիբանանի Անկախության տօնը Նոյեմբեր
21-ին:

Մեր աշակերտները ցուցաբերեցին իրենց
հպարտութիւնը որպէս Լիբանանցիներ:





Նուիրատուութիւններ

Լուսաելեկտրածին Սարքեր

Մեր ջերմ երախտագիտութիւնը կը յայտնենք Ռոթարի ակումբի, Պէյրութ Մայրի-ի (RC Beirut Cedars) մասնաճիւղին, յատկապէս՝ Տիար Ռամզի Աբու Սամահին (RC Beirut Cedars-ի նախագահին) եւ իրենց քոյր մասնաճիւղերուն մեր դպրոցին հանդէպ իրենց շարունակական աջակցութեան՝ մեր վարժարանին լուսաելեկտրածին սարքեր տեղադրելու ծրագիրին համար:

Լուսաելեկտրածին սարքերու տեղադրման նախագիծը մասամբ շահարկուած է Քլարա Մարկոսեան խնամակալութեան կողմէ: Մեր խորին շնորհակալութիւնը նաեւ կը յայտնենք Ռոթարի ակումբի, Պէյրութ Մայրի-ի (RC Beirut Cedars)-ի նախկին Նախագահ՝ Տիար Յակոբ Տանձիկեանին սոյն ծրագիրին մէջ իր առանցքային մասնակցութիւնը եւ ներդրումը հանդիսանալուն համար:



Փոխադրակառք

Վարժարանիս աշակերտներուն յարմարաւէտ փոխադրամիջոց մը ապահովելու համար, մեր բարերարներուն եւ բարեկամներուն միջոցով նոր փոխադրակառք մը գնելու կազմակերպուած դրամահաւաքին արդիւնքով, վերջապէս վարժարանս օժտուեցաւ նոր փոխադրակառքով: Ուստի, մեր սրտագին ու ջերմ շնորհակալութիւնները կը յայտնենք բոլոր մեր նուիրատուներուն եւ աջակցողներուն, ի մասնաւորի Թէքէեան Մշակութային Միութեան Ամերիկայի Արեւմտեան ափի եւ Մեծագոյն Նիւ Եորքի վարչութեանց պատասխանատուներուն, անդամներուն, համակիրներուն եւ բարեկամներուն, անոնց տարած անդուլ եւ յարաժուն նիւթաբարոյական նեցուկին համար, որոնց շնորհիւ է, որ այս ծրագիրը իրականացաւ:





Տարբեր Տոնակատարություններ

Միջազգային Փառատոն Մեր Վարժարանին Մէջ

Ուրբաթ, 8 Դեկտեմբեր 2023-ին, մեր վարժարանի ուսանողները Միջազգային Օրը նշեցին իրայատուկ փառատոնով, որուն պատրաստման ընթացքին մեր աշակերտները ծանօթացան զանազան երկիրներու մշակույթներուն, սնունդի եւ լեզուներուն մասին, միաժամանակ ամփոփելով պատկերացում կազմեցին համայնքին մէջ իրենց ունեցած տեղին ու դերին մասին: Ընդհանրապէս կը յայտնենք մեր ժրաջան ուսուցիչներուն, ինչպէս նաեւ մեր ուսանողներուն այս միջոցառումը յաջողցնելուն համար:





Պրպարա

Դեկտեմբեր 1, 2023-ին ունեցանք
դասարանային ատենամարզանք
Պրպարա:





Սուրբ Ծնունդի եւ նոր Տարւան բարձր տրամադրութիւն դպրոցէն ներս

Կաղանդի նախօրեակին մեր վարժարանին մէջ կը բուրդէր կաղանդի մթնոլորտ:

Դեկտեմբեր 22, 2023-ին մեր վարժարանին մէջ ունեցանք Կաղանդի յիշարժան տօնակատարութիւն:

Հաճելի անակնկալ էր „Powerful Kids Team-ի այցելութիւնը, որոնց ներկայութիւնը աշակերտներուն խանդավառութիւնը հասցուց իր գագաթնակէտին:

Մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք Թէքէեանցի հպարտ շրջանաւարտներ՝ Օրդ. Անի եւ Թալին Աւագեաններուն, ինչպէս նաեւ՝ Տիկ. Ալիս Աւագեանին, որոնց անսահման սիրոյն եւ սրտաբոխ նուիրատուութեան շնորհիւ իրականացաւ այս բոլորը:





"Յիսուսի Ծնունդը"

Զորեքշաբթի, 20 Դեկտեմբեր 2023-ին, Սէմ եւ Սիլվա Սիմոնեան Մանկապարտէզը ներկայացուց "Յիսուսի Ծնունդը" խորագրով կենդանի պատկերներ:





"Zumba Day" Սէմ եւ Սիլվա Սիմոնեան Մանկապարտէզին Մէջ

"Zumba"-ն պարի ու պատշաճութեան համակցութիւն է, որ կը բարելաւէ հանդիւրժողականութիւնը, եւ երեխային մօտ կ'աճեցնէ խանդավառութիւնը՝ տարբեր երաժշտութեան եւ պարի հանդէպ: Զետեաբար, 19 Յունուար 2024-ին, Սէմ եւ Սիլվա Սիմոնեան մանկապարտէզի մեր աշակերտները ունեցան ժայթքում մը, "Zumba"-ի մասնագէտ պարուսոյց՝ Օրդ. Մեղրի Կէմիճեանի հետ: Ան առիթը ընծայեց, որ մեր աշակերտները ըմբռնեն բացառիկ "Zumba"-ի դասընթացը մը՝ իր հրաշալի վայելչութեան:



Կրթական եւ Մշակութային Պտոյտներ

Պէյրութի Արաբական Գիրքի եւ Թատրոնի Միջազգային 65-րդ Ցուցահանդէսը

27 Հոկտեմբեր 2023-ին, մեր վարժարանի Ա. եւ Բ. շրջանի ուսանողները ունեցան կրթադաստիարակչական պտոյտ-այցելութիւն դէպի Պէյրութ քաղաքի կեդրոն՝ ծովափնեայ Արենա մեծ ցուցասրահը, մասնակցելու համար Պէյրութի Արաբական գրքի եւ թատրոնի միջազգային 65-րդ տօնավաճառին, նաեւ դիտելու ներկայացում մը:





Աշակերտների Տպառույթին:

Երկուշաբթի, 27 Նոյեմբեր 2023-ին, Նախ. Դ.-էն Միջն. Գ. դասարանի աշակերտներս, գացինք Պեյրուֆի Արաբական Միջազգային Գիրքերու Ցուցահանդեսին, որ կը գտնուի Պիէլի մէջ: Դոն կային տեսակաւոր խաղալիքներ, իրեր եւ բազմաթիւ գիրքեր, տարբեր-տարբեր լեզուներով՝ արաբերէն, անգլերէն եւ ֆրանսերէն: Դոն շատ ուրախ ժամանակ անցուցինք: Եթէ հնարաւոր ըլլայ անգամ մը եւս կ'ուզենք այցելել նոյն վայրը:

Նախ. Դ. դասարանի աշակերտներ

27 Նոյեմբեր 2023-ին նախակրթարան Դ. Ե. Զ. եւ Միջնակարգ Ա. Բ. Գ. դասարանները այցելեցին Պիէլի արաբական միջազգային գիրքերու ցուցահանդէսը: Շատ ընդարձակ վայր մըն էր: Դոն տեսանք կրպակներ, ուր կը ցուցադրէին բազմաթիւ գիրքեր զանազան լեզուներով: Պաշտօնեաները շատ ազնիւ էին: Անոնք ուրախութեամբ օգնեցին մեզի: Բոլոր դասարաններու աշակերտները մնացին իրենց դաստիարակներուն հետ: Այդ տեղ նաեւ կային մտային կարողութիւններ զարգացնող խաղալիքներ մանուկներու համար: Ազնիւ աշխատատու մը մեզի արտօնեց փորձել քանի մը հատ: Շատ հաճելի էր մասնակցիլ այս օգտաշատ պտոյտին:

Սոնիա Զէլիսաչեան - Նախ. Ե. դասարան

Երկուշաբթի, 27 Նոյեմբեր 2023-ին այցելեցինք Պեյրուֆի Արաբական Միջազգային գիրքերու ցուցահանդէսը: Ընդարձակ վայր մըն էր: Դոն կային տարատեսակ գիրքեր մեծ եւ պոստիկ՝ Արաբերէն եւ Անգլերէն լեզուներով: Գիրքեր գնեցինք, նստանք աթոռներու վրայ ու սկսանք կարդալ: Նոր բառեր սորվեցանք, որոնք չէինք լսած: Աշակերտները սիրեցին տեղը եւ գնեցին շատ գիրքեր:

Դրակ Զէյթուքեան - Նախ. Զ. դասարան

Երկուշաբթի, 27 Նոյեմբեր 2023-ին նախ. Դ.-էն միջն. Գ. դասարանի աշակերտներով այցելեցինք Պեյրուֆի արաբական միջազգային գիրքերու ցուցահանդէսը: Դոն ծանօթացանք զանազան գիրքերու՝ մանկական, կրօնական, լեզուական, քաղաքական եւ պատմական: Այնտեղ բաժին կար, ուր կը սորվեցնէին աշխատիլ մարդ-մեքենաներու հետ:

Այս պտոյտը շատ հաճելի էր ինձի համար, քանի որ իմ միտքս զարգացուց զանազան տեսակի գիտելիքներով:

Աղասի Փափագեան - Միջն. Ա. դասարան

Երկուշաբթի, 27 Նոյեմբեր 2023-ին Վահան Թէքէեան վարժարանի նախ. Դ.-էն միջն. Գ. դասարանի աշակերտները այցելեցին գիրքերու ցուցահանդէսը: Դոն ծանօթացան տեսակաւոր գիրքերու՝ կրօնական, մանկական եւ լեզուական: Այցելեցին զանազան կրպակներ, ուր ազնուահոգի տիկին մը միջն. Բ. դասարանի աշակերտներուն գիրքեր նուիրեց: Քանի մը ընկալէ ետք, անոնք անցան խաղալիքներու ցուցասենեակը, ուր Սաֆօն գտաւ քառակուսի խորանարդ մը: Ան՝ 30 երկվայրկեանի մէջ հմտօրէն լուծելով խառն խորանարդը՝ արժանացաւ անոր, որպէս պարգեւ:

Դաճելի ժամանակ անցուցինք դասի մթնոլորտէն դուրս՝ ուսուցիչներով: Ցուցահանդէսէն դպրոց վերադարձայ նորանոր գաղափարներ հաւաքած:

Սթիվըն Աճէմեան - Միջն. Բ. դասարան

Երկուշաբթի, 27 Նոյեմբեր 2023-ին մեր վարժարանի աշակերտներով այցելեցինք Պեյրուֆի արաբական միջազգային գիրքերու ցուցահանդէսը: Դոն կը գտնուէին բազմաթիւ գիրքեր, տեսակաւոր խաղալիքներ եւ գրեական պիտոյքներ: Դաստիարակներով դասարան առ դասարան կը շրջէինք զանազան կրպակներ, ուր կային տեսակաւոր գիրքեր այլազան ոճի, օրինակ՝ մանկական, կրօնական եւ լեզուական: Դաճելի ժամանակ մը անցուցի այնտեղ, հետաքրքրական գիրքերու ծանօթանալով:

Նենսի Ֆայատ - Միջն. Գ. դասարան



Սուրբ Ծնունդը Կենդանի Պատկեր Գեղասահքով

28 Դեկտեմբեր 2023-ին Նախ. Զ. դասարանի եւ Միջն. Գ. դասարանի աշակերտները մասնակցեցան, Christmas on Ice ներկայացման Տպայլի Palais des Congres սրահին մէջ :

Մեր սրտաբույս եւ անկեղծ երախտագիտութիւնը կը յայտնենք ՊԱՍՄԱ-ին, ինչպէս նաեւ Տիկ. Անահիտ Տանձիկեանին մեր ուսանողներուն այս ոսկէ առիթը ստեղծելուն եւ տրամադրելուն համար:



Այցելութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Կիլիկիա Թանգարան

Մեր վարժարանը 2023-2024 ուսումնական տարեշրջանը հռչակած է, Կիլիկիա Տարիէ, որուն հետ կապուած պիտի իրագործուին շարք մը ծրագիրներ: Այդ ծրագիրներէն առաջինը տեղի ունեցաւ՝ Յինգշաբթի, 25 Յունուար 2024-ին:

Մեր վարժարանի՝ Նախ. Զ.-Միջն. Գ. դասարանի աշակերտները առաջնորդութեամբ՝ իրենց դաստիարակներուն այցելեցին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Կիլիկիա Թանգարան:





Աշակերտների Տպաւորութիւն:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի Կիլիկիա թանգարանի այցելութիւնը մեծապէս տպաւորեց զիս: Այնտեղ տեսանք Կիլիկիայէն բերուած եկեղեցական անթիւ ու անհամար իրեր: Յուզուեցայ տեսնելով այն սկիւր, որուն մէջ Աջապահեան Կաթողիկոսին արցունքը հրաշքով մը վերածուած էր արինի:

Թանգարանի նոյն բաժնին մէջ, նաեւ տեսայ առաստաղէն կախուած Սուրբ Սոփիա եկեղեցւոյ մեծ ջահը: Փոխադրելու համար քակած էին զայն ու հետագային վերակազմել է ետք՝ նշմարած էին, որ կը պակսէին կարգ մը կտորներ, որոնք կորսուած էին գաղթի ծամբուն վրայ: Անցեալին գոյութիւն ունեցած էին նաեւ տասներկու այլ պզտիկ ջահեր, որոնցմէ միայն երկուքը հասած են մեզի: Գիտելիքներով հարստացած, միաժամանակ յուզումով հեռացայ թանգարանէն:

Սելինա Բէօսէեան - Միջն. Գ. դասարան



Կիլիկիա թանգարանը բաղկացած է քանի մը յարկերէ: Առաջին յարկին վրայ կային կաթողիկոսական իրեր, զգեստներ եւ եկեղեցական սպասներ: Երկրորդ յարկին վրայ տեսանք Խրիմեան Հայրիկի նկարը, արժէքաւոր գեղեցիկ նախշերով գորգեր: Սուրբ Սոփիա տաճարի վարագոյրէն մաս մը՝ ոսկեթել եւ արծաթաթել ձեռագործ նկարազարդումով, որ կը խորհրդանշէ Վերջին Դատաստանը: Դպրոց վերադարձիս երեակայեցի բոլոր տեսածներուս մասին եւ մտածեցի, թէ արդեօք ինչպիսի՞ դժուարութիւններ դիմագրաւած էին մեր պապերը՝ մեր ազգին այս գանձերը կրելու ընթացքին:

Վահան Բէօրիքեան - Միջն. Բ. դասարան

25 Յունուար 2024-ին, մեր վարժարանի տնօրէնութեան որոշումով Նախ. Զ.-էն Միջն. Գ. դասարանի աշակերտութիւնը այցելութիւն մը տուաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Կիլիկիա թանգարանը: Հոն տեսանք արժէքաւոր իրեր, որոնք մեզի հասած էին Հայոց Յեղասպանութենէն եւ տեղահանութենէն: Այդտեղ ցուցադրուած իրերը մեր ունեցածին մէկ մասը կը ներկայացնեն միայն, որովհետեւ տեղահանութեան ընթացքին մեծ մասը գողցուեցաւ, մէկ մասն ալ կորսուեցաւ այդ իրը շալկող անհատին մահանալով: Իսկ 37,000 մասունքներէն մեզի հասած են նուազ քան 1000-ը: Շատ բան սորվեցայ, Կիլիկիա Թանգարանի այցելութեամբ:

Սթիվըն Աճէմեան - Միջն. Բ. դասարան

Հինգշաբթի 25 Յունուար 2024-ին, վարժարանիս նախ. Զ. Դասարանէն Միջն. Գ. դասարանի աշակերտներով այցելեցինք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Կիլիկիա թանգարանը: Մուտքին մեզ դիմաւորեց թանգարանին առաջնորդը, ուր մեզի նախ ընդհանուր տեղեկութիւն տուաւ թանգարանին մասին: Ապա բարձրացանք առաջին յարկ, որ ընդարձակ սրահ մըն էր: Հոն աչքս զարկաւ Կիլիկիայէն հրաշքով բերուած միւռնիկ կաթսան, որ ըստ առաջնորդին բացատրութեան զայն հասցուցած էին Հայկ, ապա Լիբանան-Անթիլիաս, սակայն ծանապարհին Կիլիկիոյ հողին վրայ անոր 3 լիթր միւռնիք թափած է հողին վրայ, օրհնելով զայն վերջին անգամ: Սրահին մէջ նաեւ տեսայ կաթողիկոսներու զգեստներ եւ եկեղեցական իրեր, գորգեր, վարագոյրներ, կաթողիկոսական կնիքներ եւ այլ պարագաներ: Կ'ուխտեմ լաւ սորվիլ մեր մայրենի լեզուն եւ հայոց պատմութիւնը, մեր ազգային ինքնութիւնը պահպանելու համար:

Վանա Էքմէքեան - Միջն. Ա. Դասարան



25 Յունուար 2024-ին աշակերտներով այցելեցինք Կիլիկիա թանգարանը: Շատ խորհրդաւոր եւ հետաքրքրական վայր մըն էր, ուր շատ նորութիւններ սորվեցանք Հայ Առաքելական եկեղեցւոյ, Կիլիկիոյ աթոռին մասին: Տեսանք խաչքարեր եւ զանազան այլ ազգային հարստութիւններ: Ամենէն հետաքրքրականն էր, մանաւանդ միւռնիկ կաթսային եւ Սրբ. Գրիգոր Լուսաւորիչի ոսկեայ աջին պատմութիւնը: Նաեւ զիս հետաքրքրեց այն եկեղեցական վարագոյրը, որուն վրայ զարդանախշուած էր մարդուն վերջին դատաստանը: Վերջապէս հարուստ գիտելիքներով վերադարձանք դպրոց:

Իլայ Էլ Պըսասինի - Նախ. Զ. Դասարան

Email: info@vahantekeyan.com
Website: www.vahantekeyan.com
Facebook: Vahan Tekeyan School in Lebanon
Instagram: [vahan.tekeyan](https://www.instagram.com/vahan.tekeyan)
Phone number: 01/260525 - 01/260574